



2017 թ. մայիսի 20-ին, ժամը 18:00-ից Երևանի քաղաքապետարանի «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը կմիանա «Թանգարանների գիշեր» համաեվրոպական նախաձեռնությանը՝ միջոցառումների հատուկ ծրագրով: Թանգարանների եվրոպական գիշերվա շրջանակում «Էրեբունի» թանգարանը հանդես կգա «Ցավոտ պատմություններ. դժվար պատմելին թանգարաններում» խորագրի ներքո՝ ներկայացնելով Վան քաղաքի մշակութային ժառանգությունը, որն այսօր, ցավոք, մեզ չի պատկանում: Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ՝ մայիսի 20-ին ժամը 19:00-ից կգործի Հանրապետության հրապարակ - Էրեբունի թանգարան անվճար երթուղին՝ հնարավորություն ընձեռելով գիշերասեր այցելուներին դառնալ Թանգարանների եվրոպական գիշերվա մասնակից՝ Էրեբունի թանգարանում:

Արգելոց-թանգարանի Գիշերվա այցելուները մինչև կեսգիշեր հնարավորություն կունենան բացի մշտական ցուցադրությունը դիտելուց և միջնաբերդ այցելելուց, թանգարանի ժամանակավոր ցուցադրությունների սրահում դիտել «Վան. կորուսյալ մայրաքաղաք» ցուցահանդեսը՝ նվիրված Հայոց առաջին մայրաքաղաք Վանին: Թանգարանին կից բացօթյա սրահում կլինեն Վանի հնագիտական ժառանգության վերաբերյալ դասախոսություններ: Իրիկնամուտին Էրեբունի թանգարանի դիմացի հարթակում ԵՊՀ-ի Մշակույթի կենտրոնի սաները հանդես կգան երաժշտական ու պարային կատարումներով, նաև կցուցադրեն Վանի ազգային տարազը: Այնուհետ, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի «Ոստան» ազգագրական երգի ու պարի համույթը 1 ժամ շարունակ այցելուներին կներկայցնի Վանի ժողովրդական երգ ու պարի, ծեսերի գեղեցիկ բեմադրություններ:

Թանգարանների եվրոպական գիշերը Էրեբունիում կեզրափակվի կեսգիշերին՝ «Էրեբունի» միջնաբերդում զբոսնելով:

«Թանգարանների եվրոպական գիշեր» ծրագիրը Հայաստանում մեկնարկել է 2005 թվականից: 2017թ. կարգախոսն է «Ցավոտ պատմություններ. դժվար պատմելին թանգարաններում»:

ՀԱՅՏՈՒՆ

ՀԱՅՏՈՒՆ 20-ՈՒ ՄԱՍԻՆ ԿՐԹԱԿՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՐԹԱԿՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԵՆՏՐՈՆ

- Ժամը՝ 18:00-24:00 --Ազատ մուտք էրեբունի թանգարան և հնավայր
- Ժամը՝ 18:00-24:00 --Ցուցահանդեսի դիտում «Ցավոտ պատմություններ, Վան. Կորուսյալ մայրաքաղաք» /թանգարանի ժամանակավոր ցուցասրահ/
- Ժամը՝ 19:00 –19:10 - Ֆլեշմոբ՝ Վանի ազգային տարազների ցուցադրությամբ /թանգարանի դիմացի հարթակ/
- Ժամը՝ 19:10 – 19:20- «Ցոյաններ» պարային կատարում՝ ԵՊՀ Մշակույթի կենտրոնի սաների մասնակցությամբ /թանգարանի դիմացի հարթակ/
- Ժամը՝ 19:20-19:30 - «Կոմիտասյան երգերի շարան»՝ ԵՊՀ Մշակույթի կենտրոնի երգչախմբի կատարմամբ /թանգարանի դիմացի հարթակ/
- Ժամը՝ 19:30-20:30 – Բացօթյա համերգ «Վանի տարածաշրջանի երգերը և պարերը»՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի «Ոստան» ազգագրական երգի-պարի համույթի մասնակցությամբ /թանգարանի դիմացի հարթակ/
- Ժամը՝ 21:00-22:00 – Ղասախոսություններ Վանի հնագիտական ժառանգության վերաբերյալ /թանգարանի պերգոլաներով բացօթյա սրահ/

□ Միքայել Բաղայան «Վանա լճի արևելյան ավազանը Խաղիի կերպարների և տարածույթների համատեքստում» /Ք.ա. 9-րդ դ. վերջին քառորդ-8-րդ դ. 1-ին քառորդ/

□ Արսեն Բոբոխյան «Վանի ավազանը բրոնզի և երկաթի դարերում»

□ Սիմոն Հնայակյան «Արևների քաղաք

• Ժամը 22:00-24:00-- «Գիշերային զբոսանք» Էրեբունի միջնաբերդում